ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1919—1964)

Մեր ժողովուրդը հազարամյակների ընթացքում կերտել է մշակութային բազմաթիվ կոթողներ, որոնք Հայաստանը վերածել են պատմական մի հոյակերտ թանգարանի։ Ու թեև դրանցից շատերի պահպանությունը մինչև օրս թողված է եղել բախտի քմահաճույքին, այնուամենայնիվ, այդ կոթողները միշտ էլ գրավել են մեզ ժողովրդի գիտակից խավերի ու մտավորականության ուշադրությունը։ Նրանք իրենց ուժերի ներածին չափով արել են հնարավորը՝ ապահովելու դրանց վերականգնումն ու պահպանությունը։

Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի նախագահ Ալեքսանդր Թամանյանը, գիտական քարտուղար Աշխարհարեկ Քալանթարը, հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանը, Հայաստանի պետական թանգարանի դրականության բաժնի վարիչ, բանասեր Երվանդ Շահազիզը և այլ երախտավորներ ժամանակին վիթխարի ծառայություն են մատուցել պատմական հնությունների գիտական ուսումնասիրության, չափագրման, հաշվառման, լուսանկարման ու պահպանության գործին։

Ստորև ներկայացվող փաստաթղթերը ցույց են տալիս, թե խորհրդային իրավակարգի տարիներին ինչ վիճակում էին որոշ հնություններ, և ինչ ուշադրության է արժանացել դրանց պահպանության գործը։ Որոշ փաստաթղթերում հայ եկեղեցու նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը ժամանակի հասարակական տրամադրությունների արտահայտությունն է։

Փաստաթղթերը պահվում են ՀՀ պատմության պետական կենտրոնական արխիվում։

ԱՆ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարության դիմումը Կրաստանի առտաֆին գործոց նախարարին՝ Թիֆլիսի Կովկասյան թանգարանում պահպանվող հայկական հնություններ Հայաստանին հանձնելու կապակցությամբ։

11 օգոստոսի 1919 թ.
Երևան

Մինիստրությանս կարծիքով առաջիկա հայ-վրացական բանակցությունների սկզբին պետք է հատուկ ուշադրություն դարձնել «Կովկասյան մուզեում»[1] սեջ գտնվող հնություններից և նյութերից Հայաստանին և հայությանը վերաբերող իրերի ու հավաքածուների մեզ հանձնելու խնդրի վերա։

Թիֆլիսի մեր ներկայացուցիչ Դ. Զավրիյանի և «Կովկասյան մուզեի» հնագիտական բաժնի նախկին վարիչ պ. Սմբատ Տեր-Ավետիսյանի[2] տված տեղեկություններից երևում է, որ հիշյալ «մուզեի» հնագիտական բաժնի 2/3-մասը պատկանում է հայ ժողովրդին։ Պատերազմի սկզբին Ս. Տեր-Ավետիսյանը հիտության ճեմարանի հանձնարարությամբ շրջել է նախկին սահմանական Հայաստանի նահանգները և ժամանակավորապես (ապահովության համար) վերադարձնելու պայմանով «Կովկասյան թանգարան» է տեղափոխել՝*

1. Վանի շրջանից «Սեպագրերի հարուստ ժողովածու»

2. Էրզրումի շրջանից հայկական և հայագիտական մի ամբողջ դրադարան

---

* *Միջինակությունը չի պահպանված քնագրում, որտեղ օգտագործվում են և՛ «մուզեում», և՛ «մուզեյ» ձևերը։*

3. Վանից և Տարոնից եկեղեցական և պատմական իրեր, որոնց թվում և Առաքելոց վանքի[3] հռչակավոր քանդակագործ դուռը՝ խլած տաճիկներից Թիֆլիսում։

Մինիստրությանս գործը հաջողության տեսակետից, ցանկալի է համարում, որ վրաց կառավարության հետ բանակցելու Թիֆլիս գնացող պատվիրակները տեսնվեն պ.պ. Դ. Զավրիյանի և Ս. Տեր-Ավետիսյանի հետ իրերի դրության ավելի մանրամասն ծանոթանալու և ըստ այնմ պահանջ ներկայացնելու համար։

Բացի դրանից, մինիստրությանս կարծիքով, Թիֆլիս գնացող պատվիրակները պետք է բանակցեն մի շարք այլ անձերի հետ Թիֆլիսում գտնված կուլտուրական ուսումնական հաստատություններից մեզ հասանելիք բաժինը ստանալու վերաբերմամբ ինչպես օր. նույն մուզեումի ուսումնական կոմիսարիատի, ուսուցչական ինստիտուտի գրադարանների, մանկավարժական մուզեումի և այլևայլ գիտական հաստատությունների և այլն։

Հանրային կրթության և արվեստի
մինիստր (ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ)[4]

Ֆ. 207, ց. 1, գ. 38, թ. 11։ Մեքենագիր։ Պատճեն։

Հայաստանի լուսժողկոմի դիմումը արդգործժողկոմին՝ ժամանակավորապես Թիֆլիս տեղափոխված նյութերը Երևան փոխադրելու մասին

17 հոկտեմբերի 1921 թ.
Երևան

Խնդրում եմ միջնորդություն հարուցել վրաց կառավարության առաջ Հայաստանի Հնությանց և արվեստի պահպանության կոմիտեի գիտնական քարտուղար ընկ. Աշխարհաբեկ Լոռու-Քալանթարին[5] աջակցել Երևան փոխադրելու մեր այն հնությունները, որոնք 1916—1918 թթ. ընթացքում տարվել են Թիֆլիս և պահվում են այնտեղ։

Այդ հնություններն են.

Ա. Անիի դրամները մի առանձին արկղի մեջ, որ Կովկասյան պատմահնագիտ[ական] ինստիտուտի կարգադրությամբ 1918 թվականի սկզբին Անիի Ենաղարանից վերցրել ու տարել են Թիֆլիս (Դ. Գորդեև),

Բ. Առաքելոց վանքի դուռը, որ 1916 թվին Հայաստանից Թիֆլիս է փոխադրել Ս. Տեր-Ավետիսյանը և ժամանակավորապես տեղավորել Կովկասյան թանգարանում՝ էջմիածին ուղարկելու պայմանով, բայց մինչ օրս մնում է նույն թանգարանում։

Լուսժողկոմ [Աշոտ Հովհաննիսյան]

Ֆ. 122, ց. 1, գ. 41, թ. 77։ Մեքենագիր։ Պատճեն։

Հայաստանի նյութերի պահպանության կոմիտեի նամակը ճողժողկոմի տեղակալ Շադունցին՝ Հայաստանի նյուսիսային սահմանագծի վրա, անտառապետության շրջանում գտնված նյութերի առկա վիճակի մասին

22 հոկտեմբերի 1924 թ.
Երևան

Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի հնագիտական էքսպեդիցիան Լալվարի շրջանի հնությունների ուսումնասիրության միջոցին, անցյալ սեպտեմբեր ամսին, անցնելով մեր հյուսիսային սահմանագծով, գտավ, որ անտառապետության սահմաններում եղած հնությունները մատնված են կատարյալ անուշադրության ու քարուքանդի, այնտեղ շատ խոշոր հուշարձաններ դարձած են անասունների գոմեր, ավերակացած և նույնիսկ քարահանքի վերածված հարևան գյուղացիների կողմից։

Շրջանի բոլոր հուշարձանները, որոնք հայ արվեստի ընտիր ստեղծագործություններ են, ներկայումս գտնվում են իսպառ կործանման վտանգի առաջ։

Զմտնելով ավելի հին դարերի խորքերը, մենք, ըստ այդ հուշարձանների, տեսնում ենք, որ պատմական Հայաստանի այդ մասը ևս ունեցել է ծաղկման այն շրջանները, ինչ որ մնացած Հայաստանը, այն է X, XI և XII դդ. (Բագրատունիների և Սպասալարների տիրապետության շրջաններին՝ Հայաստանում)։

Հայկական կուլտուրայի բազմաթիվ մնացորդների տարածման շրջանը չի սահմանափակվում ներկա հայ-վրաց սահմանագծով։ Նա առանց ընդհատումների, խմբական հուշարձաններով, հասնում է մինչև Սամշուլդա[6] (Օրբեթ) բերդաքաղաքը (Խրամի վրա), որ մայրաքաղաքն էր Անիի Բագրատունիների այն ճյուղի Կորիկեների, որ թագավորում է Լոռիում։ Այդ դինաստի հիմնադրի, Անիի Աշոտ Գ. Ողորմածի որդի Գուրգենի մայրաքաղաքը Սանահինն էր (X դարի վերջին քառորդում), բայց նրա որդի Դավիթ Անհողինը իր աթոռը փոխադրեց Սամշուլդա, իրեն հպատակեցնելով Թիֆլիսի և Գանձակի էմիրաներին։

Թե՛ Դավիթը, որ 50 տարի հաջողությամբ կառավարեց և թե՛ նրա բոլոր հաջորդները (նրանց ժամանակ մայրաքաղաք էր Լոռի քաղաքը) մինչև XII դարու վերջերը մեծ շինարարություն կատարեցին իրենց պետության սահմաններում։ Այդ դինաստի բոլոր ներկայացուցիչները թաղված են Սանահինի և Հաղպատի վանքերում, պահվել են արձանագրված տապանաքարերը։

Սրան հետևում է Ամիր Սարգսի և նրա որդոց Զաքարե և Իվանե Սպասալարների (Լոռեցի հայ իշխաններ) և նրանց հաջորդների տիրապետության շրջանը (XIII—XIV դդ.), երբ շինարարությունն ամբողջ Հայաստանում և մանավանդ նրա հյուսիսային մասում նոր և մեծ թափ է ստանում։

Մեզ հետաքրքրող շրջանի հուշարձանները (նկատի ունենալով գետնի երեսին մինչ այժմ պահվածները), մի շարք բերդաքաղաքները (Սամշուլդա, Դմանիս[7], Ծոբ[8], Շուլավերի* մոտ, Խորակերտ[9], Աղթալա-պղնձահանք**, Կայծոն[10], Շնող[11], Կայան[12], Լոռի[13]), խոշորագույն վանքեր (Աղթալա[14], Խոժոռնի[15], Ջիլիզ[16], Խորակերտ, Ջանախչու[17] վանք, Խուշաբ[18], Բդավոր[19], Սեդվի[20] Հաղպատ, Սանահին...), բազմաթիվ ամրոցներ, կամուրջներ, ամեն վայրում եկեղեցիներ և այլ տիպի մանր արձաններ պատկանում են գլխավորապես հիշյալ ծաղկման շրջաններին։ Բայց XIV դարից հետո էլ մինչև XVII—XVIII դարը մենք տեսնում ենք այդ երկրում հայ մարդու ձեռքով շինարարությունը շարունակվելիս այդ վայրերում, ուր ազգաբնակչությունը եղել է բացառապես հայ (բոլոր տեղերի ընդարձակ հանդստարաններում արձանագրությունները միմիայն հայերեն են)։

Այս բոլոր մնացորդները միանգամայն հաստատում են այն պատմական դոկումենտները հայ-վրաց սահմանագծի մասին XII—XIII դարերի, որ արձանագրված է Զաքարիայի[21] կողմից 1202 թվին մի խաչքարի վրա, որ մինչև օրս էլ կանգնած է Լոռի քաղաքի պատմական մեծ ճանապարհի վրա, ուր ասված է, թե Ամիր Սարգսի և Թամար թագուհու միջև կայացած համաձայնությամբ Հայաստանի և Վրաստանի սահմանը կազմեց Խրամը և այս մի այնպիսի ժամանակ, երբ Հայաստանը զուրկ կենտրոնական ուժեղ կառավարությունից՝ մեծ զիջումներ պետք է աներ Վրաստանին։

Մեր հնագիտական էքսպեդիցիան Հայաստանի հնությունների ռեգիստրացիայի միջոցին, անցնելով հայ-վրաց ներկա սահմանագծով, կարողացավ քննություն առնել այս անգամ միայն իր ճանապարհի վրա գտնված հետևյալ խոշոր հուշարձանները. Լալվարի կատարից մինչև Խոժոռնի Բգա-

* Այժմ՝ Շահումյան տան Վրաստանի Մառնեուլի շրջանում։

** Այժմ՝ Ալավերդի քաղաքը։

վորի տաճարը, Դարք[22], Ս. Սարգիս[23] և այլ 13 միատիպ փոքր վանքեր (մի սեփով բազիլիկաներ-ն, օրորոցաձև տանիքով), Ուչքիլիսի* և Խոժոռնու միջև սրանք բոլորն էլ պահել են հայերեն արձանագրություններ։ Մեր ճամփի աջ կողմում մնաց Աղթալա վանքը, որ շինել է Իվանեն և ուր թաղված են թե՛ ինքը և թե՛ իր որդի Ավագը։

Խոժոռնու խաչաձև գմբեթավոր տաճարն ունի բազմաթիվ արձանագրություններ, որոնց մեջ շատ կարևոր բովանդակություն ունի մանավանդ Վասակի որդի Սմբատի մեծ արձանագրությունը 1191 թ. (հայոց թվով 640 թ.), որի սեջ եկեղեցին կոչվում է Կաթողիկե Խոժոռնու։

Խոժոռնու և Ջիլիզի միջև է գտնվում Աղեղու փոքրիկ վանքը XVIII դ., իսկ Ջիլիզը (Խոժոռնուց դեպի արևմուտք), որ շինած է X դարում փոքրիկ վանքի ձևով, XVI դարի վերջում տեղի Պարոն Ղորխմազը հին եկեղեցին դարձնելով ափսիդ, առաջը կառուցել է երեք նեֆանի մեծ բազիլիկա, զանգակատուն են. շենքի մեջ թաղված են Ղորխմազը, նրա որդի Ջալը (1676 թ.) և սրա որդի պարոն Համազը, որոնց տապանաքարերը ընտիր քանդակներով և հայերեն գեղեցիկ գլխավոր արձանագրություններով պահվել են իրենց տեղերում, թեև տաճարը խոզանցի է վերածված այժմ և շատ տեղեր փըրփըրված, ափսիդի ճակատի մի արձանագրությունը (շինության մասին է) երեկոյան մութի պատճառով չհաջողվեց ընդօրինակել։

Ջանախչի գյուղի եկեղեցին (X դարու, նորոգած XIII դարուն) և նրա ժամանակակից մեծ դամբարանը իրենց վրա չունեն արձանագրություններ, բայց շուրջը եղած ընդարձակ հանգստարանում շատ արձանագրություններ (հայ) կան տարբեր դարերի, հին թե նոր։

Ջանախչուց ուղիղ դեպի հարավ 3—4 վերստի վրա է գտնվում Խորակերտի նշանավոր վանքը (կոչվում է նաև Ջանախչու վանք), սա որ նույնատիպն է Հալպատի բարձրաքաշ Ս. Գրիգորի, Հաղարծնի, Գոշավանքի, Սաղմոսավանքի, Բագնայրի... և նրանց նման բարձր ճարտարապետական ստեղծագործություն, բացի խոզանոց դառնալուց քարահանք է ծառայում ներկայումս չանախչեցոց և օփրեթեցոյ** համար։ Այստեղ ընդարձակ շինարարություն է կատարվել դարերի ընթացքում։ Վանքի շրջակայքում կան ընդարձակ բնակության հետքեր, ուր հավանաբար գտնվում էր X դարի անուն հանած Նույնանուն (Խորակերտ) քաղաքը, վանքի շենքերից 4-ը այդ ժամանակի են (X դար), որոնց մեծ մասը վերջերս քանդել, ավերակի են վեր ածել, հրաշակերտ գավիթի տանիքից մնում են խաչաձև կամարները միայն օդում կախված։ Մեր այցից ընդամենը մի քանի օր առաջ ուզենալով մեծ տաճարն ևս քանդել, փլցրել են նրա հարավային պատը։ Մի քանի տասնյակ արձանագրություններ ծածկում են հուշարձանի պատերը, բոլորն էլ հայերեն գրչության ընտիր օրինակներ են։ Բացի 4 խոշոր մատուռ-դամբարաններից, որ X դարու գործ են, նույն ժամանակ է կառուցված խաչաձև մեծ տաճարը, որը սակայն XIII դարում կրել է հիմնական նորոգում, և արևմտյան կողմից նրան կցվել է գեղեցկաշեն գավիթը (Հովհաննու որդի Ստեփանոսի ձեռքով 1252 թվին արևմտյան դռան ճակատի մեծ արձանագրությունը)։ Մի մեծ նորոգում էլ կրել է տաճարը XVI դարում՝ 1551 թ., պարոն Շահնազարի և իր եղբայր Ավթանդիլի ձեռքով (հարավային պատի արձանագրությունը), հիշվում է մի այլ «Ուստա Շահնազար» 1710 թ. (հյուսիսային պատի արձանագրությունը)։ Մի քանի թվակիր արձանագրությունները տեղեկություն են տալիս ավելի ուշ ժամանակ (XVII—XVIII դարերում) վանքին արված մեծ նվերների մասին։ Շինողների, նորոգողների և այլոց դերեզմանները արձանագրված տապանաքարերով գտնվում են բակի մեջ։

Հաջորդ մեծ շենքը Խուշաբի վանքն է, որ Խորակերտից մոտ 3 վերստ հարավ-արևմուտք է գտնվում, Աղբյուրփուց նույնքան հարավ։ Հին եկեղե-

* Խուճապ վանքի թուրքերեն անվանումը։

** Հոմարնակ գյուղ Մառնեուլի շրջանում։

ցին, որ բազիլիկ տիպ ունի 3 նեֆով, V դարու գործ է։ Այստեղ կան ավելի հնագույն շինքերի մնացորդներ (պարսպի մոտ), մեծ եկեղեցին, որ խառնուրդ է բազիլիկի և խաչաձև է, ունի կենտրոնում բարձր գմբեթ՝ X դարու է, հետագայում նորոգված, X դարու է նաև մատուռ-դամբարանը։ Օփրեցիք սարերներ առաջ քանդել են տաճարի ընդարձակ պորտիքը* և քարերը տարել են իրենց եկեղեցու շինության համար, ինչպես նաև մեծ տաճարի հարավային մուտքի խոշոր քարերը, որի տիմպանի** վրայի ընդարձակ արձանագրության (հայերեն) մասին հիշում են աղբյուրփեցիք, ուրիշ 2—3 տեղում էլ (խորանի մուտքի գլխին և պատերի վրա) երևում են ջարդոտված արձանագրությունների (հայ) հետքերը։ Վանքը երկար ժամանակ և մշտապես եղել է բանուկ, որ երևում է անընդհատ կատարված նորոգման աշխատանքներից և այն գերեզմանից, որ գտնվում է նրա մեջ։ Սրա վրա գրված է. «Այս է տապան Ադալի որդի Մարութին, որ փոխեցավ թվին ՌՃՀԶ» (1727)։

Խուզաբն այժմ պահվում է շատ մաքուր, շնորհիվ այնտեղ բնակվող ռուս կույսերի։ Ռուս կույսեր ներկայումս կան նաև Ազթալայի վանքում, երևի այն պատճառով, որ այս վանքերը եղել են երբեմն հայ քաղկեդոնականների (ուղղափառ հայերի) ձեռքին, որոնց թիվը մի ժամանակ մեծ էր ամբողջ Հայաստանում։

Կոմիտես չի երկմտում, որ այս տեղեկագիրն ստանալով, Ձեր կողմից կարվեն ամենակտրուկ կարգադրություններ Ձեր ներկայացուցիչների միջոցով՝ ապահովելու հիշածս հուշարձանների պահպանությունը, որոնք մեր ճարտարապետության ընտիր կոթողներից են և չափազանց մեծ արժեք են ներկայացնում թե՛ պատմական և թե՛ գեղարվեստական տեսակետից։

Հնագիտական էքսպեդիցիայի ղեկավար,
կոմիտեի գիտնական քարտուղար ԱՇԽԱՐՀԱԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐ

Ֆ. 1063, ց. 1, գ. 14, թ. 1—2։ Մեքենագիր։ Պատճենը։

Այրարատյան թեմի խորհրդի նախագահ Հակոբ ավագ քահանա Խաչվանեցյանցի նամակը՝ ՀՀՊ կոմիտեի նախագահ Ալ. Թամանյանին՝ Եղվարդ գյուղի եկեղեցին վերականգնելու մասին

8 օգոստոսի 1925 թ.
Երևան

Եղվարդ գյուղի հասարակությունը երկար ժամանակ զուրկ է մնացել եկեղեցական արարողություններից, եկեղեցու կտուրի փուլ գալու պատճառով։ Այդ դրությունից դուրս գալու համար համայնքը որոշել է ծածկել կտուրը, բայց ինչ-որ թյուրիմացությամբ եկեղեցու պատերը միացել էին հին վանքի հետ։

Թյուրիմացությունը վերացնելու համար խնդրել էի Ձեզ համաձայնել թույլ տալ ծածկի գործը շարունակելու, համաձայնեցնելով հնության կից մասը թողնել կոմիտեիդ տրամադրության և վերացնել խորանների պատերը։ Արդ, ես խնդրում եմ, ըստ կարելույն փութացնել այդ խնդրի լուծումը։ Եվ հարմարություն տալ հավատացյալ համայնքին ծածկելու եկեղեցին՝ հոգեկան մխիթարությունից զուրկ չմնալու։

Այրարատյան թեմի խորհրդի նախագահ
ՀԱԿՈԲ (ավագ քահանա) ԽԱՉՎԱՆԵՑԱՆՑ

Ֆ. 1063, ց. 1, գ. 27, թ. 5։ Ինքնագիր։

* Եկեղեցու շքամուտք։
** Եկեղեցու դռնագլխի ճակատակալ քար (բարավոր)։

Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի դիմումը Երևանի մաղազագործկոմի նախագահին՝ Մաղկաձորի նշանավոր հուշարձանների բարեկարգման մասին

28 ապրիլի 1926 թ.
Երևան

Նկատի առնելով այն հանգամանքը, որ գավգործկոմիդ կողմից շուտով ձեռնարկվելու են աշխատանքներ, նվիրված Մաղկաձորի (Դարաչիչագի) կարգավորման-բարեկարգմանը՝ կոմիտեն որոշեց դիմում անել Ձեզ հատկացնելու համար մի որոշ գումար և տրամադրելու այն կոմիտեին՝ Մաղկաձորի նշանավոր հուշարձանները նույնպես, տեղում կատարվող աշխատանքների հետ զուգընթաց՝ դնելու բարեկարգ վիճակի մեջ (հուշարձաններին տեխնիկական օգնություն ցույց տալու, թափված բեկորները հավաքելու, շուրջը մաքրելու և այլն)։

Կոմիտեի հանձնարարությամբ հուշարձանների վերաբերյալ անհրաժեշտ աշխատանքները կատարվելու են կոմիտեին անդամ, ճարտարապետ Բունիաթյանի ղեկավարությամբ։

Բացի այդ, ի նկատի ունենալով նաև Երևանում ներկայումս տեղի ունեցող բարեկարգման աշխատանքները՝ կոմիտեն դիմում է Ձեզ, խնդրելով տրամադրել որոշ բանվորական ուժ և հնարավորություն՝ մաքրելու Սարդարի մզկիթի շուրջը և, առհասարակ, այդ հուշարձանի պահպանությունը ավելի ապահով հիմունքների վրա դնելու համար։

Նախագահ [Ա. ԹԱՄԱՆՅԱՆ]
Գիտական քարտուղար ԱՇԽԱՐՀԱԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Ֆ. 1063, ց. 1, ա. 41, թ. 1։ Բնագիր։ Ձեռագիր։

Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի գրությունը արդարադատության ժողովրդական կոմիսարին՝ Գրիգոր Մագիստրոսի ամբիոն-արձանի ոչնչացման և վանդալներին դատական մարմինների ենթարկելու մասին

27 հուլիսի 1926 թ.
Երևան

Խորհրդային իշխանությունը շատ է մտահոգված պատմական հնությունների պահպանության գործով և այդ նպատակի համար միշտ ընդառաջ է գնում կոմիտեին, որի գիտական վարչական կոչումն է հենց պահպանությունը և ուսումնասիրությունը այդ հնությունների։

Դժբախտաբար, նույն մտահոգությունը չեն ցուցաբերում պաշտոնյաներից ոմանք, և երբեմն վանդալիզմի զոհ են դառնում խոշորագույն պատմական արժեք ներկայացնող հուշարձանները։

Այդպիսի անլուր վանդալիզմի զոհ է դառել մոտ օրերս Գրիգոր Մագիստրոսի[25] ամբիոն-արձանը՝ արժեքավոր արձանագրություններով, որպիսի հուշարձանը անզուգական կոթողն է ոչ միայն հայ արվեստի, այլ ընդհանրապես կուլտուրայի, որի արժեքը բացառիկ է համաշխարհային մասշտաբով։

Մաղկաձորի հանգստյան տան համար հարկավոր են եղել սյուներ-ցցեր՝ իբրև նեցուկ՝ ու այդ անզուգական հուշարձանը քանդել են ու գործադրել այդ նպատակի համար, կորատելով, բաժան-բաժան անելով ամբիոն-արձանը։

Այս վանդալիզմի պատասխանատվությունը, ըստ մեր ստացած տեղեկությունների, ընկնում է տեխնիկ Գերասիմ Մակարյանի, գավգործկոմի աշխատակից Գալաջյանի և կապալառու Լազար Աքրիվովի վրա։

Վերոհիշյալների անմիջական պատասխանատվության թե անփութության խնդիրը, ինչպես նաև այն հանցագործների երևան հանելը դատական մարմինների քննության գործն է, որպիսին և խնդրում ենք Ձեզ։

Ընդսմին կցում ենք համապատասխան զեկուցման պատճենը, այլև լիազորում ենք Կոմիտեիս անդամ, գիտնական քարտուղար ընկ. Աշխարհաբեկ Քալանթարին տալ պատշաճ բացատրություններ։

Միաժամանակ, որովհետև այդ հուշարձանի ռեստավրացիան Կոմիտեից ահագին ծախս է պահանջելու, ուստի և ներկայացնում ենք քաղաքացիական հայց ևս, որի պաշտպանությունը հանձնում ենք համալսարանի դասախոս ընկ. Գրիգոր Զուբարյանին։

Հայցի չափը կորոշենք մոտ օրերս։

Խնդրում ենք տալ արագ ընթացք այս մեր հայտարարության։

Հնությունների պանպանության կոմիտեի նախագահ [Ա. ԹԱՄԱՆՅԱՆ]
Գիտական քարտուղար [ԱՇԽԱՐՀԱԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐ]

Ֆ. 1063, ց. 1, գ. 41, թ. 3։ Մեքենագիր։ Պատճենը։

Գառնիի շրջգործկոմի նախագահին՝ Գեղարդի վանքը անուշադրության մատնելու մասին

28 մարտի 1926 թ.
Երևան

ՀՀՊ կոմիտեի ստացած տեղեկությունների համաձայն Գեղարդա վանքը, մատնված լինելով բացարձակ անուշադրության, վեր է ածվել փարախի՝ հարյուրաչոր ոչխարների համար և զուրկ լինելով որևէ խնամքից՝ առվի և անձրևի ջրերը ճահճանալով շենքերի պատերի տակ, մեծապես վտանգել են նրանց տեխնիկական վիճակը։

Կոմիտեն խնդրում է պատասխանատվության ենթարկել հուշարձանը կեղտոտողներին և միջոցներ ձեռք առնել մաքրել տալու նրան կեղտից ու ջրից։

Շրջանիդ հնությունների դրությունն ստուգելու համար կոմիտեիս ներկայացուցիչը մի քանի օրից կլինի Ձեզ մոտ։

Գիտական քարտուղար՝ ԱՇԽԱՐՀԱԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐ

Ֆ. 1063, ց. 1, գ. 24, թ. 6։ Մեքենագիր։ Պատճենը։

Լուսավորության ժողկոմ Ա. Եղիազարյանի դիմումը ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Գալոյանին՝ Մաղկանոցի հուշարձանների խմբի վերանորոգման մասին

14 օգոստոսի 1936 թ.
Երևան

Դարաչիչագի (հին Կեչառուքի) հուշարձանները Հայաստանի ֆեոդալական ժամանակաշրջանի արվեստի և ճարտարապետության ամենանշանավոր կոթողներից են և կառուցված են XI դարի սկզբներում (1003—1033)։ Գլխավոր հուշարձանը, որ կոչվել է «Գրիգոր Լուսավորիչ», կառուցվել է Գրիգոր Մագիստրոսի նախաձեռնությամբ, 1003 թվին։

Այս հուշարձանի անսյուն գմբեթը և մի քանի այլ մասերը քանդվել են երկրաշարժից, 1827 թվին։ Մնացած հուշարձանները շինվել են Հայաստանի ֆեոդալական նշանավոր տներից մեկի՝ Պռոշյանների ձեռներեցությամբ։

Այդ վանքերը մինչև XIV դարն ունեցել են որպես սեփականություն 25 գյուղ և մեկ քաղաք։ Գրիգոր Մագիստրոսը այդտեղ հիմնած է ունեցել ճեմարան, որը եղել է ժամանակի դպրոցներից մեկը։

Հիշյալ հուշարձանները ներկայումս գտնվում են շատ վատ դրության մեջ։ Բաժինս դրամական միջոցներից գրկված լինելով, ոչ մի կերպ չի

կարողացել կարգի բերել և դնել վայելուչ դրության մեջ այդ հուշարձանները։ Պահանջվում է մոտ 14.000 ռուբլի՝ մաքրել տալու քոլոր հուշարձանները քարերից և աղտոտությունից, ծածկել տալու քանդված դմբեռները, ամրացնելու վվվելու ենթակա մասերը, կազմակերպելու թանգարան և այլն։ Դրա համար կազմված նախահաշիվը ներկայացնում եմ գրության առընթեր։

Այդ աշխատանքները կարելի է սկսել այժմ, եթե ժողկոմխորհը պահանջված դրամական միջոցները տրամադրի մեզ։ Գուցե հնարավոր լինի նաև այսպես անել. 6.000 ռուբլի հատկացնել աշխատանքների մի կարևոր մասը կատարելու այժմ (մաքրել տալ բակը, կարգավորել), իսկ մյուս մասի համար պահանջվող գումարը բաց թողնել առաջիկա տարի և այդ ժամանակ ավարտել ամբողջ աշխատանքը։

Առդիր՝ նախահաշիվը և ժողկոմխորհի որոշման նախագիծը։

Լուսժողկոմ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ֆ. 113, ց. 4, գ. 10513, թ. 17։ Հաստատված պատճեն։ Մեքենագիր։

ՀԽՍՀ ժողկոմխորհի որոշումը Ծաղկաձորի հուշարձանների պահպանության մասին

9 սեպտեմբերի 1936 թ.
Երևան

1. Նկատի ունենալով, որ Դարաչիչագի հուշարձանների խումբը Հայաստանի ֆեոդալական ժամանակաշրջանի արվեստի և ճարտարապետության նշանավոր կոթողներից է, կառուցվել է XI դարի սկզբներում և ունի պատմական խոշոր նշանակություն, ինչպես նաև նկատի ունենալով նրանց պահպանման անհրաժեշտությունը, հանձնարարել ֆինանսների և լուսավորության ժողկոմատներին վերոհիշյալ նպատակի համար 1937 թ. լուսժողկոմատի բյուջեում նախատեսել 15.000 ռուբլի։

2. Գտնել անհրաժեշտ՝ այս տարվա վերանորոգումների համար հատկացնել 6000 ռուբլի։ Հանձնարարել ֆինժողկոմատին՝ գտնել միջոցներ այդ նպատակի համար։

3. Հանձնարարել լուսժողկոմատին 5 օրվա ընթացքում Պետպլան ներկայացնել ՀԽՍՀ-ի հուշարձանների վերաբերյալ լուսժողկոմատում եղած նյութերը՝ [19]37 թ. նրանց պահպանության համար ձեռնարկումներ մշակելու նպատակով։

4. Ժողկոմխորհի հերթական նիստերից մեկում լսել լուսժողկոմատի զեկուցումը՝ ՀԽՍՀ-ում հուշարձանների պահպանության ներկա դրության հետագա անելիքների մասին։

ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ա. ԳՈՒԼՈՅԱՆ
ՀԽՍՀ ժողկոմխորհի գործերի կառավարիչ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ֆ. 113, ց. 4, գ. 10513, թ. 9։ Բնագիր։ Մեքենագիր։

Հայկական ԽՍՀ լուսժողկոմատի գավառագիտական արշավախմբի ճաշվետվությունը Աշտարակի և Արարատի շրջանների պատմական հուշարձանների դրության և պահպանության վիճակի մասին

21 հոկտեմբերի 1939 թ.
Երևան

Լուսժողկոմատի՝ օգոստոս ամսին կազմակերպած Արագածի գավառագիտական էքսպեդիցիան միաժամանակ զբաղվել է Արագածի հարավային և արևելյան լանջերին ընկած պատմական հուշարձանների պահպանության և արդի գրության ուսումնասիրությամբ։ Այդ նպատակով էքսպեդիցիան այցելել է հետևյալ պատմական վայրերը. Աշտարակ, Փարպի,

Մուղնի, Կարբի, Օհանավանք, Ոսկեվազ, Ագարակ, Բյուրական, Ամբերդ ամրոցը, Աբարանում՝ Շիրաղալա, Ղաղնաֆար, Բլխեր, Ջամրլու, Ջուչակ*, Մոսվյան և մի շարք այլ պատմական վայրեր, ընկած Արագածի տարբեր վայրերում։

Պատմական հուշարձաններով հարուստ այդ վայրերում գտնվող համարյա բոլոր հուշարձանների պահպանության դրությունը միանգամայն վատ է։ Բացակայում է սիստեմատիկ հսկողությունը։ Բոլոր հուշարձանները գտնվում են հակասանիտարական վիճակում. մի քանիսը նրանցից չունեն դռներ և այդպիսի հուշարձանները վեր են ածվել աղբանոցի։ Այդ տեսակետից կարևոր է հիշել Հախսի գյուղի Արշակունյաց հայտնի դամբարանը, որը կատակոմբային ձևի մնացած ամենակարևոր հուշարձանն է։ Ծածկված էր աղբով։ Հուշարձանին կպած փոքրիկ շենքում տեղավորված է գյուղի կոլտնտեսության դարբնոցը, որն իր աղբը թափում է հուշարձանի խոռոչին, և եթե այսպես շարունակվի, հուշարձանը մի օր կմնա դեռնի տակ։

Այդպիսի վիճակում են գտնվում նաև Սերկևի, Անապատի** վանքերը, որոնք, զուրկ լինելով որևէ հսկողությունից, քանդվում են, ինչպես, օրինակ՝ Սերկևի վանքի գյուղատեղին, որն անմիջապես վանքին կպած է, կոլտնտեսությունն առանց թույլտվության օգտագործում է իր նպատակների համար և ավերում է պատմական այդ գյուղատեղին։ Այդպիսի անմխիթար վիճակում է գտնվում նաև Կարբիում գտնվող նախկին Նարինջ քաղաք կոչված վայրը, որտեղ օգտագործում են ազատ հողամասերը, ով ինչպես ցանկանում է. և բազմաթիվ տապանաքարեր, պատմական նշանակություն ունեցող, ոչնչանում են։ Պատմական խոշոր նշանակություն ունեցող Ամբերդ ամրոցը նույնպես գտնվում է անմխիթար վիճակում։ Այս տարի սամոր հոսանքները քանդել են Օրբելու կառուցած կամարը և պատերից [տարել] որոշ չափով քարեր։ Շատ տխուր տպավորություն է թողնում վանքը, որի պատերի վրա համարյա տեղ չկա, որ զանազան ձևի, անճոռնի և զանազան տգեղ գույներով հազար ու մի մակագրություններ չլինեն։ Սա միանգամայն անթույլատրելի է և արդյունք է վատ հսկողության։ Շիրաղալայի պատմական բերդը, որը գտնվում է հողի տակ, բոլորովին չի պահպանվում, նրա մի մասը հողերի բաշխման ժամանակ տրված էր կոլտնտեսականներին՝ որպես տնամերձ հողամաս, որոնք ծանոթում են, ցանքս անում այդ հողամասում, տուն կառուցում, և, ինչպես պատմեցին տեղում, բավական արժեքավոր իրեր են դուրս եկել։ Այսպես անմխիթար վիճակում են գտնվում մեր այդ վայրերն այցելած համարյա բոլոր հուշարձանները։ Դրանց թվում բացառություն է կազմում Օհանավանքը, որը լավ է պահպանվում (տեղում), իսկ այս հուշարձանի վերաբերյալ պետք է ասել, որ վերանորոգումը ձգձգվում է։

Բոլոր վայրերում, ուր մենք առիթ ենք ունեցել այցելելու, պատմական հուշարձանների պահպանության թե՛ շրջանային լիազորները և թե՛ գյուղական հսկիչները գանգատվում են, որ պատմական հուշարձանների կոմիտեն հարկ եղած ուշադրություն չի դարձնում հուշարձանների գծով կատարվող անհրաժեշտ պահանջները բավարարելու կապակցությամբ, որ թույլ է կոմիտեի օպերատիվ ղեկավարությունը։ Կոմիտեի հրահանգիչները չեն լինում տեղերում և եղած ժամանակ հարկ եղած օգնություն ցույց չեն տալիս։

Վերջապես, որոշ շփոթ գոյություն ունի նաև շրջանային բյուջեները նպատակին ծախսելու գործում։ Մի շարք ժողկոթբաժիններ տնօրինում են հուշարձանների կոմիտեի բյուջեն այնպես, ինչպես իրենք են ցանկանում, հա-

* Այժմ՝ Վարդենուտ, Արագած, Շենավան, Եղիպատրուշ, Աղց-գյուղեր Ապարանի շրջանում։

** Այս հուշարձանները գտնվում են ներկայիս Օհանավան գյուղի տարածքում։

ճաի այդ գումարները օգտագործելով ոչ իր անմիջական նպատակին։ Մի շարք հուշարձաններ շարունակում են օգտագործվել կոլտնտեսությունների կողմից, հաճախ նույնիսկ առանց թույլտվության, որպես պահեստ, ինչպես օրինակ՝ Փարպիի պատմական V դարի ֆեոդալական ամրոցը, որը միանգամայն անթույլատրելի է։ Մինչև օրս ոչ մի զբաղեցրած հուշարձանի վերաբերյալ պայմանագրեր զբաղեցնողների հետ կնքված չեն, չնայած այդ մասին իր ժամանակին լուսժողկոմատը պարտավորեցրել էր հուշարձանների կոմիտեին՝ նման պայմանագրեր կնքելու։

Աշտարակի և Աբարանի վերոհիշյալ վայրերն այցելած բոլոր հուշարձանները, առանց բացառության, չունեն համապատասխան բացատրական տախտակներ, անհրաժեշտ տեղեկություններ տվյալ հուշարձանի պատմության և նշանակության մասին։ Գյուղական ինտելիգենցիան, աշակերտությունը, կոմերիտմիությունը, պիոներիան պետք է ներգրավվել հուշարձանների պահպանության գործի մեջ և հուշարձաններն ուսումնասիրելու հետաքրքրություն ստեղծել հենց նույն վայրերում։ Այս աշխատանքով չի զբաղվել հուշարձանների կոմիտեն։ Չպետք է մոռանալ, որ մեզ մոտ՝ Հայաստանում, պատմական հուշարձանների թվում բավական պատկառելի տեղ են գրավում հին վանքերը, մատուռները, եկեղեցիները։ Այդ տեսակետից առաջնահերթ խնդիր պետք է դառնար մեր հուշարձանների պահպանության կոմիտեի համար այդ հուշարձանները, որոնք պահվում են որպես հնադարաններ, համապատասխան բովանդակությամբ ձևավորելը։ Եթե ոչ, հաճախ ստացվում է այն տպավորությունը, որ խորհրդային իշխանությունը դեմ չէ եկեղեցուն, այլ՝ ընդհակառակը, այն պահպանում և վերանորոգում է նույնիսկ։ Այդ կա գյուղացիների որոշ շերտերի մեջ։ Ա։ կերպ ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, երբ Փարպի գյուղի սուրբ Գրիգոր կոչված XIII դարի մենաստանը ծառայում է մինչև օրս սրբատեղի, որտեղ շրջակա մի շարք գյուղերից, անգամ հեռու տեղերից ուխտ են գալիս կատաղած շան կծած մարդուն բուժելու և այլ նպատակների համար։ Եվ այդ կատարվում է բավական հաճախ։ Մոդավյան գյուղում նույնպես պատմական հուշարձանի դռանը շարունակում են մատաղ անել, մոմ վառել և զանազան ցավերի դեմ դիմել աստծու օգնությանը։

Այդպիսի դրություն գոյություն ունի համարյա բոլոր շրջաններում։ Սրա պատճառը մի կողմից այն է, որ հուշարձանների վերաբերյալ տեղերում չկան կարճ բացատրագրեր, հուշարձանների պահպանության կոմիտեի աշխատակիցները տեղերում եղած ժամանակ հարկ եղած չափով չեն զբաղվում այդ հարցերով, իսկ որ ամենակարևորն է, ամենահիմնականը, ոչ մի նման հուշարձան չի ձևավորված հակակրոնական բովանդակությամբ։ Այնինչ այս խնդրում ՀՊԿ* տնօրինության տակ գտնված ոչ մի հուշարձան չի ձևավորված այնպես, որ երևա, թե ի՞նչ նպատակով է խորհրդային իշխանությունը պահպանում այդ հին եկեղեցիները, թե ինչո՞ւմն է նրանց պատմական արժեքը, միառժամանակ ցույց տալ եկեղեցու ռեակցիոն և շահագործողական դերը մեր ժողովրդի պատմության մեջ։ Հակակրոնական պրոպագանդայի գործում այս կապակցությամբ խոշոր անելիքներ ունի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն։ Վերջում ավելորդ չի լինի նաև հիշատակել մի կարևոր հանգամանք, որ, չնայած ժողկոմխորհի որոշմանը, շրջաններում կուտակված նախկին եկեղեցական գույքը շրջկենտրոն հավաքելու և արժեքավոր թանգարանային իրերը այնտեղից առանձնացնելու ու թանգարաններ տեղափոխելու աշխատանքը դանդաղ է ընթանում։ Ինչպես տեղերում մենք պարզեցինք, նախկին եկեղեցիներում եղած շատ արժեքավոր իրեր (թանգարանային տեսակետից)

---

* Հնությունների պահպանության կոմիտե։

հափշտակվել են, այդ թվում նաև արժեքավոր ձեռագրեր, ինչպես օրինակ՝ Շիրազալա գյուղում։

Այդ աշխատանքների ավարտումը պետք է արագացնել և շտապ կարգով մեր թանգարանները տեղափոխել պատմական նյութերը։ Վերջում պետք է հիշատակել նաև, որ պատմական արժեք ունեցող որոշ քարեր, որոնց վրա կան պատմական արձանագրություններ, պետք է տեղափոխել շրջանային թանգարաններ կամ ապահովել նրանց պահպանությունը տեղում, օրինակ, Մոավյանում արժեքավոր արձանագրությամբ որոշ քարեր թափված են բակում, բաց արևի տակ։ Ինչպես որոշ տեղերում մեզ հայտնեցին, նրանց մի մասը դեռևս ընթերցված չէ։

Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի ուշադրությունը պետք է հրավիրել այն հանգամանքի վրա, որ շրջաններում եղած արժեքավոր ձեռագրերի հավաքումը չեն կազմակերպում, ինչպես որոշ տեղերում, օրինակ, Աբարանում մեզ հայտնեցին, որ նույնիսկ ՀՊԿ-ն հայտնել է, որ իրենք ձեռագրերի գնման գործով չեն զբաղվում, որի հետևանքով ձեռքի տակ եղած ձեռագրերը վերադարձվել են իրենց տերերին։

Այս է էքսպեդիցիայի այցելած վայրերի պատմական հուշարձանների վերաբերյալ կատարած աշխատանքի նկարագրությունը։

Էքսպեդիցիայի ղեկավար Վ. ԴԱՐՏԱՆ

Ֆ. 1063, ց. 1, գ. 253, թ. 1-4։ Մեքենագիր։ Պատճեն։

Հուշարձանների պահպանության վարչության բաժնի պետի զեկուցումը Իշխանի շրջխորհրդի գործկոմի նախագահին՝ Գոշավանքի և Գոշ գյուղի սահմաններում գտնվող հուշարձանների պահպանությունը և դրանց վիճակի մասին

4 հուլիսի 1964 թ.
Երևան

Մեր վերջին ստուգումը ցույց տվեց, որ Գոշավանքի և Գոշ գյուղի սահմաններում գտնվող հուշարձանների պահպանությունը թողնված է անհանդուրժելի վատ վիճակում։

Գոշավանքի հուշարձաններն ապօրինի կերպով օգտագործվում են ինչպես Կուլբիշևի սովխոզի, այնպես էլ այլ կազմակերպությունների ու անհատ մարդկանց կողմից։ Հուշարձանները լցված են ամեն տեսակի իրերով ու նյութերով և առնված են փականքի տակ։

Անհրաժեշտ է լրիվ դատարկել, մաքրել և բանալիները հանձնել պահակին՝ այցելուներին ի պաս դնելու համար։

Սեղանատան ներսը տարիներ շարունակ տարբեր-մոտիվներով և տարբեր անձինք օգտագործում են մերթ որպես բանջարանոց, մերթ որպես պղտատու ծառերի պարտեզ, իսկ այժմ էլ՝ նաև որպես պահեստ։

Համաձայն հուշարձանների պահպանության կանոնների՝ խստիվ արգելվում է նրա ներսում գյուղատնտեսական որևէ աշխատանք (ինչպես և կառուցումներ) կատարելը, ուստի պետք է անհապաղ մաքրել այդ հուշարձանը այնտեղ եղած կանաչից, ծառերից և պահեստային կառուցվածքներից։

Հուշարձանախմբի արևելյան կողմի քնակիչ Արշակ Գրիգորյանը, որ տարիներ շարունակ խցկվում է հուշարձանի տերիտորիան և ավերում նրա արևելյան կողմի պահպանված կառուցվածքների մնացորդները, այժմ էլ ավերել է մի մատուռի պահպանված հիմքերը, իսկ մյուս մատուռն առնելով իր սահմանի մեջ, օգտագործում է որպես խոզանոց, թռչնոց և այլն։

Անհրաժեշտ է նրա քնակելի շենքի արևմտյան պատը սահման ընդունելով անջատել հուշարձանների հարթակի լանջերն իրենց կառուցվածքների մնացորդներով և Գրիգորյանի տնտեսական նպատակով ստեղծված

«հարմարությունները», աղտոտությունները փոխադրել իր բնակարանի մյուս կողմը։

Դեպի Մխիթար Գոշի դամբարանը տանող մեր կողմից բարեկարգվող ճանապարհի սկզբում եղած գոմերը միանգամայն ապօրինի են և աղտոտում ու քաքքայում են թե՛ մեր նորակառույց հարթակն ու աստիճանները և թե՛ խանգարում գյուղամիջյան ճանապարհին։

Այս պայմաններում միանգամայն անիմաստ են դառնում նաև մեր հետագա աշխատանքները հիշյալ ճանապարհի բարեկարգման ուղղությամբ։

Պարզ գյուղի մոտ գտնվող գյուղատեղի եկեղեցին և նրա շուրջը տարածված գերեզմանոցն այս 1964 թվի ընթացքում կանխամտածված ձևով ավերել են։ Բոլոր գերեզմանաքարերը՝ շուռ են տվել, տակը պեղել, հավանաբար նյութական արժեքներ փնտրելու նպատակով։ Այդպիսի բարբարոսական արարքը ոչ մի կերպ չի կարելի անպատիժ թողնել։ Որոշ հանգամանքներ ցույց են տալիս, որ այդ հանցագործները Գոշի բնակիչներ են։ Պետք է այդ մասին հատուկ ցուցում տալ նրանց հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու։

Պահակ Գոհար Ռևազյանը լրիվ անտարբերության է մատնել հուշարձանների պահպանության գործը և ոչ մի չափով չի կատարում իր պարտականությունները։ Հուշարձանների ներսի կեղտն ու նրանց վրա բուսած կանաչները տարիների վաղեմություն ունեն։

Պետք է անհապաղ ազատել Գոհար Ռևազյանին և նրա փոխարեն մի այնպիսի մարդու նշանակել, որ կարողանա հուշարձանները դուրս բերել ներկա վիճակից ու ապահովի նրանց հետագա պահպանությունը։

Նման պայմաններում հուշարձանների թողնելը միանգամայն անհանդուրժելի է, ուստի անհրաժեշտ է տեղական օրգանների և հատկապես գյուղական սովետի գործկոմի ուշադրությունը հրավիրել այդ հարցի վրա։

Խնդրում ենք, վերը նշվածների վերաբերյալ համապատասխան միջոցներ ձեռք առնել և արդյունքների մասին հայտնել մեզ։

Հուշարձանների պահպանության վարչության բաժնի պետ Ա. Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ֆ. 106, ց. 1, գ. 712, թ. 16։ Մեքենագիր։ Պատճեն։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Կովկասյան մուզե—հիմնադրվել է 1867 թ. Թիֆլիսում՝ գերմանացի գիտնական Գուստավ Ռագեի շանքերով։ Ռագեն եղել է թանգարանի առաջին տնօրենը։

2 Սմբատ Տեր-Ավետիսյան (1875—1943)—պատմաբան, հնագետ, մանկավարժ, պատմական գիտությունների դոկտոր (1936)։ Հավաքագրել է Հայաստանի և հայկական գաղթավայրերի արձանագրությունները և կազմել հայկական վիմագիր արձանագրությունների ժողովածու։ 1904 թ. մասնակցել է Ն. Մառի ղեկավարությամբ Անիում կատարված հնագիտական աշխատանքներին։ Հետագայում պեղումներ է կատարել Ղազախի շրջանում, Ղարաբաղում, Գիլանում, Նախիջևանում, Արմավիրում, Հարսում, Դվինում և այլուր։

3 Առաքելոց վանք—կոչվել է նաև ս. Ղազարի վանք, Տիրինկատարի վանք, ս. Թադևոս, Թարգմանչաց վանք, միջնադարյան հայկական վանքային համալիր, գտնվում է Մուշից մոտ 4 կմ հարավ։ Ըստ ավանդության, հիմնվել է Գրիգոր Լուսավորչի, առաքյալների՝ Հռոմից բերված մասունքների վրա։ Աղբյուրներում նշվում է XI դարից, բարգավաճել է XII դարում։ XV—XVI դդ. դարձել է գրչության նշանավոր և գործուն կենտրոն։

4 Աղայան Նիկոլ Պողոսի (1873—1947)—գրականագետ, մանկավարժ, ՀՍՍ գաղութության ղեկավար գործիչներից։ Եղել է Հայաստանի Հանրապետության (1918—1920) խորհրդարանի անդամ։ 1919-ից ՀՍՍ լուսավորության և արվեստի նախարարն էր։

5 Աշխարհարեկ Քալանթար (1884—1942)—պատմաբան, հայագետ, հնագետ, աշխատել է Ն. Մառի մոտ, մասնակցել Անիի հնագիտական պեղումներին։ Հայաստանում զբաղվել է հնությունների, հուշարձանների պահպանության խնդիրներով, եղել է Հայաստանի հնություն-

ների պահպանության կոմիտեի գիտական քարտուղարը։ Նրա աշխատությունները նվիրված են Հայաստանի պատմահնագիտական բազմաթիվ հարցերին (հին քարի դարաշրջանից մինչև միջնադարը ներառյալ), արվեստի և ճարտարապետության հուշարձանների, վիմագիր արձանագրությունների ու ժայռապատկերների գիտական լուսաբանմանը։

6 Սամշոզան (Օրբելի)—Կյուրիկյան Բագրատունյաց թագավորության առաջին մայրաքաղաքը (երկրորդը Լոռեն է), գտնվում է Վրաստանի հանրապետության Թելավի-Ցալքայի (Սպիտակ շրջան) շրջանի Շամշուլգե հայաբնակ գյուղի մոտ, Խրամ գետի ձախ ափին։

7 Դմանիս—X—XIII դդ. միջնադարյան քաղաքատեղին գտնվում է ներկայիս Վրաստանի հանրապետության Դմանիսի շրջանի փոքր Դմանիս գյուղի մոտ։

8 Մոր—վաղ միջնադարյան բերդ և ավան, իշխանանիստ, Մորփոր գավառի վարչական կենտրոնը, ներկայիս համանուն գյուղը Վրաստանի Մառնեուլի շրջանում։

9 Խորակերտ—XII—XIII դդ. վանական համալիր, գտնվում է Մառնեուլի շրջանի Ջանֆոլի գյուղի մոտ։ Նշանավոր է խաչվող զույգ կամարներով գավիթը։ Ունի հայերեն բազմաթիվ արձանագրություններ։

10 Կայծոն—միջնադարյան բերդ ներկայիս Թումանյանի շրջանում։

11 Շնող—հայաբնակ գյուղ Թումանյանի շրջանում։

12 Կայոն—միջնադարյան բերդ Դեբեդ գետի հովտում, Աղզպատ գյուղի մոտ։

13 Լոռի (հնում՝ Լոռե)—միջնադարյան բերդաքաղաք, Կյուրիկյան հայ Բագրատունյաց թագավորության երկրորդ մայրաքաղաքը, գտնվում է ներկայիս Ստեփանավան քաղաքի մոտ։

14 Աղթալա—XIII դ. հունադավան հայերի հոգևոր կենտրոններից է հյուսիսային Հայաստանում, գտնվում է ներկայիս Թումանյանի շրջանի Աղթալա գյուղում։

15 Խոժոռնի—X—XIII դդ. բերդ, ներկայումս կա նաև նույն անունով գյուղ Վրաստանի Մառնեուլի շրջանում։

16 Ջիլիզ—հայաբնակ փոքրիկ գյուղ Լալվար լեռան հյուսիսային լանջին, Թումանյանի շրջանում։

17 Ջանախչու վանք—տե՛ս ծան. 9, Խորակերտ։

18 Խուշաբ—(վրացերեն՝ Հուշաբի) XIII դ. հունադավան հայերի հոգևոր կենտրոն, գտնվում է Մառնեուլի շրջանի Աղքյորփի (Սպիտակ կամուրջ) գյուղի մոտ։

19 Բգավոր—XIII դ. ճարտարապետական հուշարձան, գտնվում է Թումանյանի շրջանի Աքորի գյուղի մոտ։

20 Սեգվի—հայաբնակ գյուղ Թումանյանի շրջանում։

21 Զաքարե—Զաքարե Բ Մեծ իշխան (ծնունդ. թիվն անհայտ է, մահ՝ 1212), զորավար, պետական-քաղաքական գործիչ, ամիրսպասալար (վրաց-հայկական զորքերի գերագույն հրամանատար), Սարգիս Մեծ Երկայնաբազուկի և Սահակադուխտ Արծրունու որդին։ 1191-ին վրաց թագավոր թագուհուց ստացել է ամիրսպասալարի, 1203-ին՝ մանդատոր թուխարցեսի (արքունի կնքապահ և թագուհու թիկնազորի պետ) պաշտոնները՝ դառնալով պետության առավել ազդեցիկ դեմքը։ Հրապարակել է արքայական հրամանագրերն ու կարգադրությունները, գլխավորել բոլոր արշավանքներն ու պատերազմները՝ վերջիններիս ժամանակ թագուհուց ստանալով նաև արքայական դրոշը։ Որպես ամիրսպասալար, ուներ մշտական բնակատեղի՝ Լոռե քաղաքը։ Գլխավորելով հայ-վրացական միացյալ բանակը, եղբոր՝ Իվանե աթաբեկի հետ ավելի քան 20 տարի շարունակ ազատագրական կռիվներ է մղել Հայաստանի կենտրոնական ու հարավային շրջաններում կոտակված սելջուկյան էմիրությունների դեմ։ Այդ կռիվների ընթացքում ազատագրել է հյուսիս-արևելյան Հայաստանի մեծագույն մասը, որտեղ էլ հիմնվել է Զաքարյանների իշխանությունը։ Մահացել է հիվանդությունից և թաղվել Սանահին վանքի՝ Զաքարյանների տոհմական գերեզմանոցում։

22 Դարք—գյուղ (և ձմեռանոց) Լոռիում, Սանահնի շրջակայքում, XVIII դ. սկզբներին պատկանում էր Սանահնի վանքին։ XX դ. առաջին քառորդում արդեն սովորական ձմեռանոց էր, ուներ 94 բնակիչ (1926-ին) և մտնում էր Ալավերդու (այժմ՝ Թումանյան) շրջանի մեջ։ Հետագայում լքվել է։

23 Ս.Սարգիս—վանք Մառնեուլի շրջանի Աղքյորփի գյուղի մոտ։

24 Նեֆով բազիլիկ—միանավ բազիլիկ եկեղեցի, ուղղանկյունաձև հատակագծով թաղածածկ շենք։

25 Գրիգոր Մագիստրոս Պահլավունի (990—1058)—XI դ. գիտնական, փիլիսոփա, մանկավարժ, սերում է Պահլավունի իշխանական տոհմից, կոչվել է նաև Գրիգոր Բյուրեղի։ Եղել է ժամանակի լուսավորյալ մարդկանցից մեկը, զգալի հետք է թողել հայ միջնադարյան մշակույթի պատմության մեջ։ Հիմնադրել է սեփական դպրոց, որտեղ դասավանդել է հարտասանություն, փիլիսոփայություն, քերականություն, մաթեմատիկա։ Կառուցել է վանքեր, եկեղեցիներ, մատուռներ՝ Կեչառիսում, Հավուց-Թառում և այլուր։